ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ (30.01.2024)

Վերաֆինանսավորման տոկոսադրույքի վերաբերյալ

2024 թվականի հունվարի 30-ի ՀՀ ԿԲ խորհրդի նիստին մասնակցում էին՝ ՀՀ ԿԲ նախագահ Մ. Գալստյանը, ՀՀ ԿԲ նախագահի տեղակալներ Ա. Նուրբեկյանը և Հ. Խաչատրյանը, խորհրդի անդամներ Հ. Ղահրամանյանը, Դ. Նահապետյանը, Ա. Մանուկյանը, Լ. Սահակյանը, Ն. Ղազարյանը

Խորհրդի նիստը սկսվեց հունվարի 30-ի դրությամբ Իրավիճակային հաշվետվության ներկայացմամբ: Քննարկվեցին գնաճի, արտաքին միջավայրի, իրական, հարկաբյուջետային, ֆինանսական և դրամավարկային հատվածների զարգացումները:

Ներկայացվեցին արտաքին հատվածի ընթացիկ զարգացումները: Արձանագրվեց, որ չորրորդ եռամսյակում, ընթացող աշխարհաքաղաքական երևույթների և պահպանվող անորոշությունների պայմաններում, համաշխարհային և Հայաստանի Հանրապետության հիմնական գործընկեր երկրների տնտեսական ակտիվությունը շարունակել է դանդաղել, թեև սպասվածից ավելի ցածր տեմպերով: Նման զարգացումների և իրականացվող զսպող դրամավարկային քաղաքականության պարագայում միջազգային ապրանքահումքային շուկաներում գնաճային միջավայրը մեղմվում է, ինչպես նաև համաշխարհային տնտեսությունում գնաճը որոշակիորեն դանդաղում է: Այդուհանդերձ, գործընկեր երկրներում աշխատաշուկայի դրական զարգացումները շարունակում են նպաստել պահանջարկի ընդլայնմանը: Միաժամանակ, 2024 թ-ի սկզբին Մերձավոր Արևելքում աշխարհաքաղաքական զարգացումների սրման հետևանքով արձանագրվել է էներգակիրների գների որոշակի աճ և ձևավորվել են առաջարկի արժեշղթաների խաթարման ռիսկեր: Ուստի, նման իրավիճակում առաջատար երկրների կենտրոնական բանկերն առաջիկայում կվարեն զսպող դրամավարկային պայմանների աստիճանական թուլացման քաղաքականություն: Գնահատվում է, որ նշված զարգացումների արդյունքում արտաքին հատվածից ՀՀ տնտեսության վրա կդիտվեն թույլ գնանկումային ազդեցություններ:

Խորհուրդը քննարկեց ՀՀ տնտեսական իրավիճակը. արձանագրվեց, որ չորրորդ եռամսյակում տնտեսական ակտիվությունը շարունակել է մնալ բարձր՝ պայմանավորված հիմնականում ծառայությունների և շինարարության ոլորտներում արձանագրված բարձր աճով: Եռամսյակի ընթացքում համախառն պահանջարկը ևս պահպանվել է բարձր մակարդակում՝ հիմնականում ի հաշիվ ներքին պահանջարկի աճի: Վերջինիս նպաստում է մասնավոր սպառման բարձր աճը՝ պայմանավորված նախկինում կուտակված խնայողությունների ծախսմամբ, եկամուտների շարունակական ավելացմամբ, ինչպես նաև շինարարության աճին զուգահեռ երկարաժամկետ սպառման ապրանքների նկատմամբ պահանջարկի աճով: Միաժամանակ, միջազգային այցելուների և զբոսաշրջիկների հոսքի դանդաղման հետևանքով արտաքին պահանջարկը որոշակիորեն թուլանում է:

Քննարկվեցին ՀՀ ֆինանսական շուկայի զարգացումները և փաստվեց, որ 2024թ-ի սկզբին շուկայական կարճաժամկետ տոկոսադրույքները ձևավորվել են քաղաքականության տոկոսադրույքի շուրջ: Միաժամանակ, պետական պարտատոմսերի շուկայում դիտվել է տոկոսադրույքների բարձրացում հատկապես եկամտաբերության կորի միջնաժամկետ և երկարաժամկետ հատվածներում: Տարեսկզբին արտարժույթի շուկայում պահպանվել է որոշակի կայունություն: Արձանագրվեց նաև, որ բարձր ներքին պահանջարկի պայմաններում շարունակում է հատկապես արագ տեմպերով աճել ֆիզիկական անձանց սպառողական և հիպոտեկային վարկավորումը:

Խորհուրդը քննարկեց գնաճային զարգացումները, որի ընթացքում փաստվեց, որ 2023 թ. դեկտեմբերին արձանագրվել է 0.9% գնաճ, որը պայմանավորվել է պարենային ապրանքների գների և ծառայությունների սակագների՝ համապատասխանաբար 1.8% և 0.5% աճով, իսկ ոչ պարենային ապրանքների գները նվազել են 0.1%-ով: Արդյունքում՝ 12-ամսյա գնաճը նվազել է և դեկտեմբերի վերջին կազմել -0.6%: 12-ամսյա բնականոն գնաճը ևս ամսվա ընթացքում նվազել է՝ կազմելով -0.4%: Արձանագրվեց նաև, որ արտաքին հատվածից գնանկումային ազդեցությունների և ՀՀ ԿԲ-ի կողմից նախորդ տարիներին իրականացված զսպող դրամավարկային քաղաքականության պայմաններում պահպանվում է ցածր գնաճային միջավայր, ինչն արտահայտվում է նաև աշխատանքի շուկայում աշխատավարձերի աճի տեմպի որոշակի նվազմամբ և գնաճային սպասումների մեղմմամբ:

Իրավիճակային հաշվետվության և արտաքին ու ներքին մակրոտնտեսական զարգացումների քննարկումից հետո Խորհուրդն անցավ մակրոտնտեսական սցենարների, դրամավարկային քաղաքականության ուղղությունների քննարկմանն ու քաղաքականության տոկոսադրույքի որոշման կայացմանը: Քաղաքականություն մշակող թիմը Խորհրդին էր ներկայացրել վերոնշյալ մակրոտնտեսական իրավիճակում առաջիկա տնտեսական զարգացման հեռանկարներից ածանցվող հնարավոր

դրամավարկային ռիսկերը նկարագրող սցենարներ: Քննարկելով տնտեսության զարգացման տարբեր սցենարներ՝ Խորհրդի անդամները միակարծիք էին, որ, չնայած պահպանվող բարձր տնտեսական աճին և ներքին պահանջարկին, գնաճային միջավայրը շարունակում է մնալ ցածր՝ հիմնականում պայմանավորված արտաքին հատվածից փոխանցվող գնանկումային ազդեցություններով և ՀՀ ԿԲ-ի կողմից իրականացված զսպող դրամավարկային քաղաքականությամբ: Միաժամանակ, Խորհրդի գնահատմամբ, 12-ամսյա գնաճն առաջիկայում դեռևս կպահպանվի նպատակային ցուցանիշից ցածր մակարդակում: Խորհրդի անդամների մի մասի դիտարկմամբ՝ ցածր գնաճային միջավայրի ձևավորումը կրում է բացառապես փոխարժեքի արժևորումից և արտաքին հատվածից փոխանցվող արտածին գործոնների ազդեցությունները, իսկ տնտեսությունում դեռևս առկա են ներքին պահանջարկի ընդլայնման և դրանից ածանցվող գնաճային ճնշումների ու գնաճային սպասումների ավելացման ռիսկեր: Վերջինիս կարող է նպաստել նաև Արցախից բռնի տեղահանված բնակչության ինտեգրմանն ուղղված առաջիկայում սպասվող հարկաբյուջետային խթանների ավելացումը: Հետևաբար, այդ ռիսկերի կառավարման տեսանկյունից Խորհրդի տվյալ անդամները նպատակահարմար էին համարում դրամավարկային պայմանների ավելի պահպանողական և աստիճանական թուլացումը: Խորհրդի մյուս մասի կարծիքով էլ, վերջին շրջանում ցածր գնաճի վարքագիծը, ըստ էության, արտահայտում է պահանջարկի ու գնաճային գործոնների էական թուլացման հանգամանքը: Բացի դրանից Հայաստանի աշխատաշուկայում աշխատուժի բարձր առաջարկի պարագայում մեծ հավանականությամբ կառաջանան աշխատավարձերի նվազման և աշխատաշուկայից ածանցվող ներքին պահանջարկի ու գնաճային միջավայրի էական թուլացման ռիսկեր: Առաջիկայում սպասվող ցածր գնաճի պայմաններում նշված գործոնները կարող են խոչընդոտել միջնաժամկետում գնաճը նպատակային ցուցանիշին մոտեցնելու քաղաքականությանը: Ուստի դրամավարկային քաղաքականության հարաբերականորեն զսպող դիրքի արագ չեզոքացման անհրաժեշտությունից ելնելով՝ Խորհրդի տվյալ անդամները նպատակահարմար էին համարում դրամավարկային պայմանների ավելի մեծ քայլով թուլացումը: Արդյունքում՝ ԿԲ խորհուրդը ձայների մեծամասնությամբ որոշեց վերաֆինանսավորման տոկոսադրույքը նվազեցնել 0.5 տոկոսային կետով: Խորհուրդը նաև հաստատեց իր հետևողականությունը՝ համարժեք գործողություններով ապահովելու պահանջարկի հետագա կարգավորում և գնաճային սպասումների կայունացում: Դրամավարկային քաղաքականության նախանշված սցենարում 12-ամսյա գնաճն առաջիկայում կպահպանվի նպատակային ցուցանիշից ցածր մակարդակում, այնուհետև աստիճանաբար կավելանա և միջնաժամկետում կկայունանա նպատակային 4% ցուցանիշի շուրջ:

ԿԲ խորհուրդը նաև գնահատում էր, որ նախանշված ուղեգծից գնաճի շեղման ռիսկերը հիմնականում հավասարակշռված են: Ռիսկերի՝ որևէ ուղղությամբ դրսևորման պարագայում Խորհուրդը համարժեքորեն կարձագանքի և կապահովի գների կայունության նպատակը:

Խորհուրդը հաստատեց ԿԲ գործիքների տոկոսադրույքների վերաբերյալ որոշումը և առաջարկվող մամուլի հաղորդագրությունը, որոնք կցվում են:

Տոկոսադրույքի որոշում

ԿՈԴ
050.0021 Լ. 30.01.24

30 հունվարի 2024 թվականի թիվ 21 Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ԵՎ ՎԵՐԱՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՄԱՄԼՈ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասով, 20-րդ հոդվածի «գ» և «ե» կետերով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթներով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը

Ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի վերաֆինանսավորման տոկոսադրույքը սահմանել 8.75%:
2. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից տրամադրվող լոմբարդային ռեպո գործիքի տոկոսադրույքը սահմանել 10.25%:
3. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից դրամական միջոցների ներգրավման գործիքի տոկոսադրույքը սահմանել 7.25%:
4. Հավանություն տալ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի վերաֆինանսավորման տոկոսադրույքի վերաբերյալ մամլո հաղորդագրությանը (կցվում է):
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի ինտերնետային տնային էջում հրապարակման օրվան հաջորդող օրը:

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահ **Մարտին Գալստյան**

Երևան

ՄԱՄՈՒԼԻ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ
30.01.2024

2024 թ. հունվարի 30-ի նիստում ԿԲ խորհուրդը որոշեց վերաֆինանսավորման տոկոսադրույքն իջեցնել 0.5 տոկոսային կետով՝ սահմանելով 8.75%:

2023 թ. դեկտեմբերին 12-ամսյա գնաճը նվազել է՝ ամսվա վերջին կազմելով -0.6%: 12-ամսյա բնականոն գնաճը ևս նվազել է՝ կազմելով -0.4%:

2023թ-ի չորրորդ եռամսյակում համաշխարհային և Հայաստանի Հանրապետության հիմնական գործընկեր երկրների տնտեսական ակտիվությունը շարունակել է դանդաղել: Միջազգային ապրանքահումքային շուկաներում գնաճային միջավայրը մեղմվում է և համաշխարհային գնաճը որոշակիորեն դանդաղում է: Այնուամենայնիվ, գործընկեր երկրներում աշխատաշուկայի դրական զարգացումները շարունակում են նպաստել պահանջարկի ընդլայնմանը: 2024 թ-ի սկզբին, Մերձավոր Արևելքում աշխարհաքաղաքական զարգացումների սրմամբ պայմանավորված՝ արձանագրվել է էներգակիրների գների որոշակի աճ և ձևավորվել են առաջարկի արժեշղթաների խաթարման ռիսկեր: Նման իրավիճակում առաջատար երկրների կենտրոնական բանկերն առաջիկայում աստիճանաբար կթուլացնեն զսպող դրամավարկային պայմանները: Արդյունքում՝ արտաքին հատվածից ՀՀ տնտեսության վրա ակնկալվում են թույլ գնանկումային ազդեցություններ:

Չորրորդ եռամսյակում Հայաստանի Հանրապետությունում պահպանվել է բարձր տնտեսական ակտիվություն, որին շարունակել է նպաստել շինարարության և ծառայությունների ճյուղերի բարձր աճը: Արտաքին պահանջարկը որոշակիորեն դանդաղել է զբոսաշրջության աճի տեմպի նվազման հաշվին: Միաժամանակ, ներքին պահանջարկը շարունակում է մնալ բարձր՝ հիմնականում արտահայտվելով մասնավոր սպառման բարձր աճով: Արտաքին հատվածից թույլ գնանկումային ազդեցությունների և նախորդ տարիներին իրականացված զսպող դրամավարկային քաղաքականության պայմաններում պահպանվում է ցածր գնաճային միջավայր: Վերջինս շարունակում է արտահայտվել նաև աշխատանքի շուկայում աշխատավարձերի աճի տեմպի և գնաճային սպասումների որոշակի նվազմամբ:

Ստեղծված իրավիճակում **ԿԲ խորհուրդը նպատակահարմար է գտնում նվազեցնել քաղաքականության տոկոսադրույքը:** Խորհուրդը հետևողական է լինելու համարժեք գործողություններով ապահովելու պահանջարկի կարգավորում և գնաճային սպասումների կայունացում: Դրամավարկային քաղաքականության նախանշված սցենարում 12-ամսյա գնաճն առաջիկայում կպահպանվի նպատակային ցուցանիշից ցածր մակարդակում, այնուհետև աստիճանաբար կավելանա և միջնաժամկետում կկայունանա նպատակային 4% ցուցանիշի շուրջ:

ԿԲ Խորհուրդը գնահատում է, որ նախանշված ուղեգծից գնաճի շեղման ռիսկերը հիմնականում հավասարակշռված են: Ռիսկերի որևէ ուղղությամբ դրսևորման պարագայում Խորհուրդը համարժեքորեն կարձագանքի և կապահովի գների կայունության նպատակը:

Կենտրոնական բանկի հասարակայնության հետ
կապերի ծառայություն